

ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հագուստը քաղաքակրթության առաջին նշանակալից քայլերից մեկն է. նրա ծագումն ու ձևաբովանդակային զարգացումը պայմանավորված է բնակլիմայական, սոցիալական, հասարակական շերտավորման, արվեստի ընկալման ու կիրառման, անհատական ճաշակի և այլ բազմաթիվ գործոններով:

Ժամանակի ընթացքում տարազը ներկայանում է ոչ միայն որպես սոցիալական զանազան՝ դիրքերի, այլև երկու տարբեր սեռերի առանձնահատկությունների ընդգծման միջոց: Հագուստների տարաբնույթ ու տարածե բազմազանությունը կախված է նաև ազգային, պատմամշակութային յուրահատկություններից. պատահական չէ, որ օգտագործվում է ազգային տարազ հասկացությունը:

Հագուստների փոփոխությունը, այլ հանգամանքներից զատ, մեծապես պայմանավորված է նաև ազդեցության գործոնով: Հայտնի է, որ մեր նախնիների տարազը մեծ նմանություն ուներ իրանականի հետ: Դա պատահական չէ, այլ որդյունք է տնտեսական, քաղաքական, մշակութային այն սերտ առընչության, որ գոյություն ուներ հայ և իրանական ժողովուրդների միջև: Ուսումնասիրողները, ինչպես շատ հարցերում, այնպես էլ տարազի հարցում հակված են տեսնելու զուտ իրանական ազդեցություն: Մենք սա վիճելի ենք համարում, և այստեղ պետք է տեսնել փոխազդեցություն և ոչ թե միայն ազդեցություն (մանավանդ, եթե ուրարտական շրջանն էլ դիտենք մեր ժողովրդի պատմության մի հատվածը, իսկ ուրարտական ազդեցությունը անհերքելի է իրանական իրականության մի շարք կողմերի վրա): Իհարկե, անվերապահորեն չպետք է մերժել և ազդեցության որոշ դրսևորումներ, որոնք ինքնըստինքյան հասկանալի են:

Տարազների մասին առաջին տեղեկությունները քաղում ենք հնագույն որմնանկարներից, մետաղադրամներից, արձաններից, իսկ ավելի ուշ՝ հայ մատենագրությունից ու պատմագրությունից: Հայկական տարազին վերաբերող լուրջ ու սպառիչ աշխատանք է Վ. Հացունու՝ նշված ուսումնասիրությունը, որտեղ մխիթարյան հայրերին բնորոշ գիտականությամբ ու բծախնդրությամբ, քննված է հայկական տարազը իր պատմական զարգացման գործընթացի մեջ՝ պատմական տարբեր ժամանակահատվածներում: Նա համեմատում-համադրում է տարբեր ժամանակաշրջանների հագուստները, նրանց փոփոխությունները, տարազին վերաբերող նոր հասկացությունները, վերջիններիս հին համարժեքները (եթե կան): Հեղինակը քննում է նաև հասարակության տարբեր խավերի (թագավոր, թագուհի, նախարարներ, դշխուհիներ, զորականներ, զինվորներ, քաղաքացիներ, գյուղացիներ, կրոնավորներ) հագուստները:

¹ Տե՛ս Լ. Վարդան Վ. Հացունի, Պատմության հին հայ տարազին, Վենետիկ, 1923: (Այսուհետև շարադրանքում՝ էջը):

Բնականաբար, մեզ հետաքրքրում է տարազների անվանումների լեզվական քննությունը, որը Վ. Հացունու ուսումնասիրության խնդիրներից դուրս էր:

Նյութը քաղել ենք V դարի ինքնուրույն ու թարգմանական գրականությունից, հայկական համաբարբառներից ու գրաբարի բառարաններից:

Նկատենք, որ զգեստների անվանումներում այնպիսի հիմնական տարաբաժանում, ինչպես աղամաբզու զգեստ—կանացի զգեստ, հստակորեն չի սրտահայտվում: Բազմաթիվ անվանումներ վերաբերում են թե՛ տղամարդու, թե՛ կնոջ հագուստին (թագ, գօտի, կօշիկ, արկանելի, վերարկու... և այլն): Դրանց պատկանելությունը որոշվում է համատեքստից, որևէ նկարագրություն, որից և տեղեկություններ ենք ստանում տարբեր սեռերի մարդկանց հագուստների մանրամասների մասին:

Բիրենք մեկ օրինակ. Բուզանդի մի վկայություն մարդկանցից Հայր Մարգարեի, շրջելով ներսես եպիսկոպոսի ենթակա գավառներում, բացականչում է. «Զիարդ զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է» (Բուզ. 97): Այս օրինակը հուշում է կանանց և հոգևորականության հագուստների նմանություն մասին՝ հաշվի առնելով երկարությունը: Բուզանդի մեկ այլ հատվածից ակնհայտ է դառնում կրոնավորների որոշ բարքերի դրսևորումը՝ կապված հատկապես նրանց հագուստների հետ. Մի ոմն Զավէն «... ամենայն քահանայից ուսոյց առնել հանդերձ վինուորաց... զի ոչ ըստ կրօնիցն ազանէին քահանայքն զպճղնաւորսն, որպէս օրէն էր ի բնէ, այլ սկսան զխոտորկտորսն ի վերայ ծնգացն ունել և զարդարէին զհանգերձս իւրեանց պէս պէս նարօտօք... և զմորթ մեռելուտիս գազանացն քահանայքն անխտիր ազանէին, որ ոչ վայել էր: Եւ ինքն Զավէնն աթիւնեալս... և զկնգմենիս և զգայլենիս աղանէր» (223):

Անդրադառնանք արտահագուստ—ներհնահագուստ հասկացություններին: Բանական մարդը, երբ սկսել է հանդերձավորվել, սկզբնական շրջանում, և թերևս երկար ժամանակ, չէր տարբերում ներքնահագուստ-արտահագուստ հասկացությունը: Նրան պետք էր ծածկոց՝ բնության մեջ, կենցաղում, ռազմի դաշտում իր գործունեությունը իրականացնելու հարմարություն:

Հացունու վկայությունները ներքնազգեստին (մարմնոյ կտաւեղէնք) «ԺԶ դարուն ծանօթացան քաղաքակիրթ ժողովուրդք, սկսելով, ինչպէս կերկի Գաղիայէն» (էջ 5):

Մատենագրական որոշ տվյալներ կան, որոնք ակնարկում են ներհին զգեստ—արտահին զգեստ տարբերակումը:

Օրինակ՝ անդրաւարտիք—վարտիք բռնորի առկայությունից ենթադրվում է առաջինի ներքնահագուստ լինելը՝ ստուգաբանական մեկնություն. իրան. andār «նքս»— vart/vērt «ծածկ»: Այդ են հաստատում և որոշ օրինակներ. «Եւ արասցես նոցա անդրաւարտիս կտաւիս, ծածկել զառականս մարմնոյ իւրեանց» (Ելք. ԻԸ. 42): Ստուգաբանական իմաստից ենլելով՝ շապիկը նույնպես կարելի է դիտել որպես ներքնազգեստ (միջ. պրս. šapīk, պրս. šabi «գիշերազգեստ»): «Որ հանէ ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ի նմանէ և զշապիկս քո» (Ղուկ. Զ. 29): Մատենագրության տվյալներով շապիկը նաև արտահագուստ է (տե՛ս Արմ., նՀԲ): Ներհնահագուստ հասկացությունն են արտահայտում նաև ներհնակ, վտաւակ, սփածանելի բռնորը: «Զգեցուցես... Ահարոնի... զպարեգօտս պճղնաւորս ի վերայ ներքնակացն» (Ելք. ԻԲ. 5): «Բազում տնգամ և զներքնակ պատմուճանս ի վեր քաշելով, եթէ որովայնն ուռոյց է՝ հարցափորձես» (Փիլոն. Բանք. 60): «Զվտաւակն ի ներքոյ զգեստու իւրոյ» (նՀԲ): «էստ զսփածանելիս և. ածաւ զմիջով իւրով ի վերայ առակա-

նաց իւրոց ի ներքոյ զգեստու իւրոյ (Վկայք. 163): «Եւ գիտացին զի մերկ էին և կարեցին իրեանց սփածանելիս» (Մննդ. Գ. 7.):

Շապիկ, սփածանելի, վտաւակ որոշ համատեքստերում «ներքնահագուստ» իմաստը շունեն:

Արտահագուստ հասկացութիւնն արտահայտող բառերը հաճախ ունենում են կրկին բաղադրիչը: «Կրկնոց փոքրիկ սունէր նմա» (ՆՀՔ): «Ստանալ փափուկ ինչ հանդերձ բարակս և ողորկս և այծենիս կրկնաւորս» (ՆՀՔ):

Հագուստ ընդհանրական հասկացութիւնը արտահայտում են հետևյալ բառերը. տարագ, զգեստ, հանդերձ, ձորձ, ազանելիք, արկանելի: «Պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ազանելիք՝ հասարակաց նոցա է ըզգեստ» (Խոր. 223): «Գձուձ հանդերձիւքն հասանիցէ առ իւր գերիսն» (Ծմես. ճառ. է. 3): «Ընկեցեալ զձորձ իւր՝ յարեաւ եկն առ Յիսուս» (ՆՀՔ):

Այս խմբի բառերին բնորոշ իմաստով երբեմն հանդես է գալիս ծածկոյթը: «Զգլխոյն և զոտիցն զօրութիւն ոչ ապականել օտարոտի ծածկութիցն զգեցմամբ» (ՆՀՔ):

Հ.-ե. ծագում ունեն ազանելի, զգեստ, հանդերձ բառերը, տարագ, արկանելի բառերի համար ենթադրվում է իրանական ծագում, թեև բացառելի չէ արկանելի-ի բնիկ հայերեն լինելու հանգամանքը:

Հագուստների ընդհանրական անվանումներից ամենահաճախականը հանդերձն է: Ահա որոշ տվյալներ V դարի ինքնուրույն գրականությունից (տրվյալները քաղված են համաբարբառներից):

	ազանելի	արկանելի	զգեստ	հանդերձ	ձորձ	տարագ
Ծղնիկ	1	0	1	4	0	0
Կարյուն	0	1	1	0	0	0
Բուզանդ	0	0	0	13	0	0
Նդիշե	0	0	0	14	0	0
Խորենացի	1	0	6	3	0	1
Փարպեցի	0	1	1	8	1	0

Ընդհանրական իմաստ ունի և վերաբերում է բառը «զգեստ, վերնազգեստ, գլխի ծածկույթ» նրբիմաստներով: «Կին յորժամ բաց գլխով հանդիպի, վաղվաղակի վերարկու արկանէ գիսացն» (ՆՀՔ): «Զբաճկոն ընկերի քոյ... զի այն է վերարկու նորա» (ՆՀՔ): Այս և այլ բազմաթիվ օրինակներից ակնհայտ է դառնում, որ վերաբերում է բառը պահել է իր ստուգաբանական իմաստը՝ «ի վերայ արկանել», այսինքն՝ ծածկույթ, շոր:

Հագուստների անվանումներ են նշում հետևյալ կաղապարներով կազմութիւնները.

1. Կենդանու անուց + ենի (տվյալ կենդանու մորթուց պատրաստված հագուստ). աղուեսենի, այծենի, առիծենի, գայլենի, գառնենի, դուարենի, ոչխարենի, ուլենի, սամուրենի... «Զսամուրենիս և զկնգմենիս և գայլենիս ազանէր» (ՆՀՔ): «Մածկեալ յաշս իշխանին դուարենի զգեստիք ի հանդերձս ոշխարաց» (ՆՀՔ): «Եւ զուլենիսն ագոյց ի բազուկս նորա և ի վերայ մերկոյ պարանոցի նորա» (Մննդ. ԻԾ. 16):

2. Նյութ ցույց տվող գոյական + եղէն, եայ; ի. ասուի, այծեայ, ասուեայ, խորգեղէն, մագեղէն, մաշկեղէն, բրդեայ, բրդեղէն, ստեւեղէն... «Զգոյշ լինիչիք հանդերձ քում. մագեղէնս և մաշկեղէնս եթէ կամիցիս ի ներքո ազանիչիր, թէ սգաւոր իցես» (Ըւագր. 140): «Խոշոր բրդեայ զգենուին» (ՆՀՔ): «Զգեցաւ մագեղէն» (ՆՀՔ):

3. Նյութի (կտորի) անվանումը որպես հագուստի անվանում. կտաւ, մորթ, ստեւ, սնդու, բուրդ, բհհեզ, կաճ, գզաթ.... «Զգեցեալ էին ի տաճարին կտաւ մաքուրս» (ՆՂԲ): «Ազանէր բհհեզս և ծիրանիս» (ՆՂԲ): «Վասն էր Յովհաննէս ստեւ ուղտոյ զգենոյր» (Ոսկ. Եւ. 180):

4. Կտավի, շորի գույնը որպես զգեստի անվանում. «Կապուտակ և ծիրանի զգեցուցանեն նոցա» (ՆՂԲ): «Զգեցեալ հիրս և կարմիրս» (Ծղեկ. Իգ. 6):

Անդրադառնանք հագուստների զանազան տեսակների անվանումների և նրանց բառակազմական, իմաստային և ծագումնաբանական քննությունը:

1. Գլխարկ

Արդի հայերենում հաճախական գլխարկ բառը գրաբարում հազվադեպ է հանդիպում (վաղ շրջանից ՆՂԲ-ն վկայություն չի բերում): Այդ հասկացությունը գրաբարում արտահայտվում է այլ բառերով՝ գլուխ + այլ արմատ (կամ ածանց) կաղապարով. գլխանոց, գլխադիր, գլխապատ, գլխապան, գլխապահ: Ահա մի քանի օրինակ. «Մածկոյթն այն գլխադիր ինչ է» (ՆՂԲ): «Գըլխանոց ազուցեալ երկաթի (տոր. 35): «Զգլխապատսն քակելով և զվարսն հարթելով» (ՆՂԲ): Գլխարկ հասկացությունն են արտահայտում նաև գլխոյ հանդերձ, գլխալինդ վարջամակ կապակցությունները: Բացի վերոհիշյալներից կան նաև մի շարք բառեր, որոնք գլխարկի զանազան տեսակներ են (կամ գլխարկի մաս): Ներկայացնենք դրանք համապատասխան օրինակներով:

Աշխարհաւանդ «թագավորական թագի կապը». Բուզանդը վկայում է մեկ անգամ, որը բերում է և Արմ.-ը համապատասխան մեկնությամբ: Ակնհայտորեն իրանական փոխառություն է, որի երկրորդ բաղադրիչն է իրան. vand «կապ», իսկ առաջին բաղադրիչի իսկությունը պարզ չէ:

Ապարօշ— Արմ.-ը մեկնում է որպես «գլխին կապելու մի զարդ», ՆՂԲ-ն՝ «վարջամակ ազնիւ պատեալ զգլխոյն արանց կամ կանանց. կամար գլխոյ, խոյր, արտախուրակ»: Վկայված օրինակներից երևում է, որ բառը ավելի շատ «հագնելիք», քան «զարդ» իմաստն ունի. «Ապարօշ բհհեզեայս», «կապեաց ապարօշն ի ճակատ իւր» (ՆՂԲ): Բառը հավանորեն իրանական ծագում ունի:

Արտախոյր— ՆՂԲ-ին բառը ծանոթ չէ. բառիս մեկ անգամ հանդիպում ենք Ագաթանգեղոսի երկում, որը և բերում է Արմ.-ը. «Զթագաւորս շքեղացուցանեն ի նմանութիւն արտախոյր պսակի ի վերջաւորն փողփողելոյ»: ՆՂԲ-ն նույնացնում է արտախուրակ բառի հետ, որը և նշում է համապատասխան բացատրությամբ ու վկայությամբ: Արմ.-ը մեկնում է «թագավորական թագ», որը և ճիշտ բացատրություն է: Աճառյանը, ենթադրելով բառի իրանական ծագումը, անբացատրելի է համարում առաջին բաղադրիչը: Նորագույն փաստերով հաստատվում է բառի իրանական բնույթը (Բեյլի, Բենվեհիստ). ավելի համոզիչ է վերջինիս փաստարկը՝ իրան. rta-xauda «ուղիղ գլխարկ»²: Այս ստուգաբանությունը հավաստվում է նաև մի լրացուցիչ փաստարկով. «Անարասիս» հայերեն թարգմանության մեջ կա մի այսպիսի տող. «Միայն արքան ունի իրավունք գլխին ուղիղ տիարա խոյր դնելու»³:

Փազարճադաշն— մատենագրության մեջ միակ վկայությունը բերում է ՆՂԲ-ն. «Որպէս զօրականացն սաղաւարտն, զոր ի հին արտաքնոցն կորբանն

² S6 Transactions of the Philological Society. London, 1945, էջ 69.

³ Քսենոփոն, Անարասիս, Եր., 1970, էջ 53.

կոչեն, այսինքն՝ գաղաթնադաշն»։ Բառի վկայության ժամանակաշրջանը ըստույզ չէ։

Կղակ/զտակ— բառարանները նշում են «գլխարկ» իմաստը։ Ընթադրվում է քարթվելական ծագում։

Խագ— հաճախական կիրառություն ունի «թագավորական թագ» նշանակությամբ. իրանական փոխառություն է։

Խոյր— (թագավորի, քահանայապետի, իշխանների գլխարկ)։ «Զգեստաւորէ զնա թագաւորական զգեստու և զնէ խոյր ոսկի ընդելուզեալ մարգարտով» (Լաւրբ. 31)։

Խաղհար (կանացի գլխարկ)— «Մի՛ ծամակալս ի ծամս, մի՛ տեռակալս և թաղհարս ի գլուխս» (ՆՃԲ)։

Մամակալ— կրում են միայն կանայք։

Կեղար/կիղար «խոյր»։ Նվազ հաճախական է։ ՆՃԲ-ն բերում է մեկ օրինակ։ Հունարենից կատարված փոխառություն է։

Միքր «պսակ, խույր»— «Իբրև փեսայի եղի ինձ միթր... միտրն պսակ ինչ բոլորեալ... գոր զնեն փեսայք ի հարսանիս» (Ոսկ. Ծս. 458)։

Վարսակալ— հիմնականում տղամարդու գլխանոց է, ի տարբերություն ծամակալի։ «Ծկն դիպեցաւ սմա օտար պատանի մի... վարսակալ եղեալ ի գլուխ» (Բուզ. 226)։

Ուշագրսով է, որ վարս, գէս, մագ, հեւ հոմանիշներից հետևալով, մագակալ կազմությունները բառարանները չեն ավանդում, իսկ գլխակալ-ով ՆՃԲ-ում մեկ օրինակ կա՝ հետգրաբարյան շրջանից։

Քուսիթայ (ըստ բառարանների կրոնավորների գլխարկ) «Մագեղէն քուսիթայ եղ ի գլուխ» (ՆՃԲ)։

Տեռ, փաղան, ֆոլ բառերը հիմնականում «շղարշ, երեսի քող» իմաստն ունեն, որոնք կարելի է և որոշ վերապահությունը գլխանոց համարել։

Կլխարկ պատրաստող հասկացությունը գրաբարում արտահայտվում է հիմնականում գոյ.+գործ, գոյ.+արար կաղապարով (թագագործ, խոյրագործ, խոյրարար)։ Այս կաղապարը չի գործում գլխարկի բոլոր անվանումների դեպքում (համեմայնդեպս բառարանները չեն վկայում)։ սակայն անկախ վկայությունից կաղապարը պետք է համարել ընդհանրական։

Կլխարկ դնել իմաստի արտահայտման համար բայահիմք (բայարմատ) +ել(ալ) կաղապարը ըստ էության չի գործում։ Թերևս միայն նշելի է սաղաւարտել «սաղավարտ դնել»։ Բառարանները նշում են երեք օրինակ, բոլորն էլ դերբայական ձևով։ Թագեմ «թագադրել, պսակել» վկայված է ուշ շրջանից։

Ավելի գործածական են գոյ.+բայ հարադրավոր կազմությունները. ածել (վարսակալ), դնել (վարսակալ, թագ, խոյր, սաղաւարտ, միտր), արկանել (գլխարկ, քող), ագանել (գլխանոց), կպել (թագ)։ Ինչպես նկատելի է ավելի տարածված է գոյ.+դնել կաղապարը։

II. Կոշիկ

Այս հասկացությունն արտահայտում են կոշիկ, մոյկ, օղ, հողաթափ բառերը։ Առաջին երկուսը իրանական փոխառություններ են՝ վկայված V դարից։ Երկու տարբեր անվանումների առկայությունը ենթադրել է տալիս, որ դրանք նույն առարկայի տարբեր տեսակներ են, որը սակայն վկայված օրինակներից չի զգացվում, կամ էլ գործ ունենք փոխառության տարբեր սկզբնաղբյուրների կամ տարբեր ժամանակահատվածի հետ։

Կոշիկը գործածական է և արդի գրական արևելահայերենում, իսկ մոյկը՝ արևմտահայերենում։

Մտնակ «կոշիկ» (ըստ երևույթին կանացի կոշիկ) վկայված է միջին-հայերենյան փուլից, բայց պետք է համարել հին փոխառություն (մոյկ բառի հնչյունափոխված տարբերակն է, իսկ Կ-Շ հնչյունափոխությունը գործել է հին և միջին պարսկերենում):

Օդ «կոշիկ» բնիկ հայերեն բառ է՝ դարձյալ վկայված V դարից. «Օդիւ պնդեցեր զոտս դոցա» (ՆՇԲ): Հետգրաբարյան շրջանից են՝ սանդալ, ոտնաման, տրեխ, սօլ: Սանդալը թերևս գործածական է եղել գրաբարում, մանավանդ որ Բուզանդը ունի սանդալաուր բառը: Չմուշկը վկայված է մեկ անգամ՝ 13-րդ դարից:

Որպես կոշիկ մասի անվանումներ գրաբարը վկայում է անկաբուրդ, գաւշապար, խրաց, կապիճ, կրուկ, ներբան, փոկ բառերը: «Անկարուրդք կօշկաց նոցա և հողաթափք իւրեանց հնացեալք» (Յեսու. Բ. 5): «Ոչ հատցին խրաց կօշկաց նոցա» (ՆՇԲ): «Ընդ ներբան կոշկի նորա»: «Յորժամ զկօշիկսն ի թոյրըս սելութեան քաջաթոյրս ներկանիցէ, սրակտուցս, նեղագարշապարս և ի կրկունս սելացեալս...» (Ոսկ. Պող. 69):

Կոշիկ հագնել հասկացությունը արտահայտվում է գոյ. + ազանել հարադրությամբ (ազանել կօշիկ, հողաթափ, մոյկ), գոյ. + պնդել (օդիւ պնդեցեր զոտ):

Կոշիկ հանել հասկացությունը արտահայտվում է գոյ. + լուծանել, գոյ. + հանել, գոյ. + զերծանել կաղապարներով: «... և անց յայնկոյս, այնպէս զի և զկօշիկն անգամ ոչ եհան յոտից» (Վկայք. 185): «Լոյծ զկօշիկս յոտից քոց, քանզի տեղիդ... սուրբ է» (Նկեղ. պատմ.): Հանդիպում է նաև բովանալ զկօշիկ կապակցությունը. «Բոկանայր այր զկօշիկ իւր և տայր ցրնկեր» (Հոռութ. Գ. 7.):

III. Այլ կարգի նագուստներ

Այս դասակարգման մեջ ընդգրկվող բառերը բազմաթիվ են, բազմաբրնույթ՝ թե բառակազմության, թե հաճախականության, թե ժագումնաբանական տեսակետից: Հագուստների շատ անվանումներ առկայանում են մարմնի մաս + պան, անոց կաղապարներով (անթանոց, թիկնանոց, լանջանոց, թիկնապահ, լանջապահ, կրծանոց, ուսանոց,...): Քանի որ մարմնի մաս ցույց տվող բառերը հիմնականում հնդեվրոպական են, ապա կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ կազմությունները բնորոշ են եղել նախքան որոշ հագուստների անվանումների փոխառելը:

Ներկայացնենք մի քանի հագուստների անվանումներ՝ ըստ հարկի որոշ դիտողություններով ու նկատառումներով:

Աղաբողոն — հունական փոխառություն է: «Վերարկու, կրոնավորի կարճ զգեստ»: Վկայված է թարգմանական և ինքնուրույն գրականության մեջ: Բառը ունի նաև անաղավ, անաբող, բողոն... ձևերը:

Ամղան «պատմուճան, վերարկու» — առաջին վկայությունը Աստվածաշնչից է: «Տեսի յաւարին ամղան մի նկարէն» (Յեսու. է. 21):

Անակիրզ «կարճ պարեգոտ»: Մեկ անգամ վկայել է Բուզանդը. «Ազաւ նա պարէգօտ մի, զոր անակիրզս կոչեն» (152): Համատեքստից հասկացվում է, որ բառը դիտվում է որպես օտար:

Անամեստիոն «բղամիդ»: Դարձյալ եզակի վկայություն ունի, դարձյալ դիտվում է որպես օտար բառ (տե՛ս Արմ):

Արիգած «ղենջակ, զոգնոց». «Ոչ զառիգածն ածել, ոչ քուրճ զզենուլ» (ՆՇԲ): Բնիկ հայերեն բառ է⁴:

⁴ Տե՛ս է. Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Ծր., 1974, էջ 48—49:

Ասղեաքոռոփ— ՆՂԲ մեկնում է «անշուք հանդերձ»: Վաղ գրաբարում ավանդված չէ: Հաճախական գործածություն չունի:

Գրատ «զգեստ, վերարկու»: Հանդիպում են գրատ, գրաստ, դրատ, դրատս, դրատս ձևերը: Ծնթադրելի է իրանական ծագում:

Գրգլի «ցնցոտի, հին զգեստ»: Բառի գոհացուցիչ ստուգաբանություն չկա:

Գօտի— Հաճախական գործածություն ունի. «Գօտիք ձեր ընդ մէջս և կօշիկք ձեր յոտս» (Սլք. ԺԲ. 11): Բնիկ հայերեն բառ է⁵:

Դիպակ «գործվածք, հագուստ»— «... զդիպակս և զճեղանակս. զգզրածիրանին և զմիջնածիրանին. զատունին արկանելի և զերեւելի լակոնացին» (Ծսայ. Գ. 22—23):

Դուռա— վկայված է 11—12-րդ. (Մագիստրոս, կամբրոնացի): Այդ վկայությունների մեջ էլ շեշտվում է օտար հագուստ լինելու հանգամանքը: Արաբերենից կատարված փոխառություն է:

Եգրածիրանի— (տե՛ս դիպակ-ի օրինակը):

Եփօղ/եփօտ «կարճ վերարկու, որ հագնում են ղևտական քահանաները»: Մի շարք վկայություններ կան Աստվածաշնչում: Օտար հասկացություն արտահայտող օտար բառ է:

Զանկապան (ծնկները ծածկող հագուստ). «Արքն այնոքիկ կապեցան պատմուճանօք և զանկապանօք» (ՆՂԲ): Իրանական փոխառություն է:

Զուեար «գոտի»— սեմական փոխառություն է, վկայված է մեկ անգամ: «Դնէին զղաստառակն կամ զզունարն (կամ զգօտին) ի վերայ անձանց» (Արմ):

Թամբատեակ/թամբատոց՝ «ձորձ, ցնցոտի»: ՆՂԲ-ն ենթադրում է «մինչև ազդրերը հասնող հագուստ»՝ նկատի ունենալով քամբ բառի նաև «ազդր» իմաստը: Թամբը Արմատականում ստուգաբանված չէ: Ըստ Գ. Զահուկյանի, այն հ.-ե. ծագում ունի⁶:

Միրանի (թանկարժեք զգեստ. հագնում են հիմնականում թագավորները): Քանի որ բառը առնչվում է ծիրան-ի հետ, ենթադրելի է կարմրավուն, դեղնավուն հագուստ, բայց գրաբարի բառարանները ծիրանի (ծիրանագույն) մեկնում են նաև մանուշակագույն, կապույտ, և այլն):

Կամար «գոտի»— «Փոխանակ կամարին շուան գօտի» (Ոսկ. Պող. I 69): Իրանական փոխառություն է:

Կողոբ «անթև, կարճ զգեստ»— «... սիրէ ծածկել զմերկութիւն, առնեն և նոքա հանդերձս անպաճոյճս... կողոբս ամարանի և թեզանաւորս ձմերանի... (Սղիշ. Մատ. 139):

Մեքան (կարճ հագուստ). վկայված է մեկ անգամ. «Անդ հանդերձ պաճուճեալք և ժամանակ մենթանաց» (Արմ.): Իրանական փոխառություն է:

Նուարտան «ծածկույթ»— «Ծածկեցին զնա մազեղէն նուարտանաւ կապուտակաւ» (ՆՂԲ): Արմատական բառարանում ստուգաբանված չէ. ակնհայտորեն իրանական փոխառություն է՝ ni-vart «ծածկոց»: Այդ արմատով առկա են այլ կազմություններ⁷:

Շապիկ— Գրաբարում ունի և ներքնազգեստ, և արտահագուստ նշանակությունը: Գատելով բառի ստուգաբանական իմաստից՝ իրան. šab «գիշեր»՝ պետք է ենթադրել, որ նախապես այն ունեցել է «գիշերանոց, ներքնազգեստ» իմաստը, և իմաստի լայնացումը կատարվել է հետագայում:

Ուրար «եկեղեցականի ուսանոց, նաև աշխարհականի գոտի»: Հունական փոխառություն է. վկայությունները հիմնականում ուշ շրջանից են:

⁵ Տե՛ս է. Աղայան, Նշվ. աշխ., էջ 48, 49:

⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1987, էջ 153:

⁷ Տե՛ս Լ. Լավհանեսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 255:

Պատմունքան (երկար զգեստ՝ տղամարդու և կանացի): Հաճախական կիրառություն ունի: Իրանական փոխառություն է:

Պարեզօտ — հաճախական կիրառություն ունի: Թեև Աճառյանը ենթադրում է իրանական ծագում (տե՛ս Արմ), բայց այն կարող է լինել նաև հայկազմություն, մանավանդ եթե հավաստի լինի զօտի բառի հ.-ե. (բնիկ հայերեն) ծագումը:

Սփածանելի — հավանորեն ներքնազգեստ է, այդ են վկայում և օրինակները. «Կարեցին տերևս թզենույ և արարին իւրեանց սփածանելիս» (ՆՀԲ): «Սւ գիտացին զի մերկ էին և կարեցին իւրեանց սփածանելիս» (Մննդ. Գ. 7):

Վերարկու — բացի «թիկնոց, մեկնոց, հանդերձ» իմաստից նաև «զլիխ ծածկոց է»։ «Կին յորժամ բաց զլիսով հանդիպի, վաղվաղակի վերարկու արկանէ գիսացն» (ՆՀԲ):

Տարատ — վկայված է մեկ անգամ. «Արարին զանդրաւարտիսն տարատ» (Նլք. ԼԹ. 27):

Յփսի «այժի մորթուց հյուսված կոշտ կտոր»։ «Ոչ հանդերձ ասուեայ ըզգենոյր, այլ ցփսեայ» (Նկեղ. պտմ. Բ. 25):

Փիլոն՝ «վերարկու, կրկնոց»:

Քղամիդ (ըստ Արմ-ի «իշխանական վերարկու»): «Գարձեալ առաջի Պիղատոսի... ազուցանէին նմա ծիրանի և արկանէին քղամիդ կարմիր» (Կոշ. 250):

Քոթանակ (ըստ ՆՀԲ-ի «շապիկ, բաճկոն, սփածանելի»):

Քուրձ «կոպիտ զգեստ»:

Հագուստների անվանումների մեջ փոխառյալ շերտը ավելի ծավալուն է, քան բնիկ հայերենը: Բայց քանակակաւս կողմը այս դեպքում չի արտացոլում բառախմբերի գործառական, որակական առանձնահատկությունները: Օրինակ, հունարենից անցած բառերը, որ քանակով ամենաշատն են, գործառական մի քանի տեսանկյունից տարբերվում են, ասենք, հայերեն բառերից կամ իրանական փոխառություններից: Առաջին՝ հունարենից անցած բառերի զգալի մասը մուտք է գործել թարգմանությունների միջոցով, և թարգմանիչը, չզբաղվելով համապատասխան հասկացութեան հայերեն անվանումը, այն թողնում է նույնությամբ, երկրորդ՝ հաճախ համատեքստում դրանք դիտվում են որպես օտար միավորներ, և տրվում է հայերեն համապատասխանակը, այսինքն՝ գործ ունենք ոչ թե օտար բառի գործածության, այլ օտար բառարանային միավորի հետ, երրորդ՝ դրանց մի մասը վկայված է մեկ-երկու թարգմանական գործերում միայն, չորրորդ՝ հաճախական չեն, հինգերորդ՝ մի քանի բառեր վկայված են հետգրաբարյան շրջանից, հայերենի ոչ մի լեզվավիճակում այդ բառերը կայուն ու հաճախական կիրառություն չեն ունեցել:

Փաստորեն մի քանի տասնյակի հասնող հունարեն բառերից իսկական փոխառություններ կարելի է համարել միայն աղարողոն, միթք, սեմ, փիլոն, ֆղամիդ բառերը, սեմական փոխառություններից՝ գուրպա, խանձարուր, տարագ:

Ինչ վերաբերում է իրանական շերտին, ապա բառերի գերակշիռ մասը արդեն գրաբարյան փուլից իսկ (հավանորեն դրանից էլ վաղ) հայերենի բառապաշարի կայուն ու յուրացված շերտն էր:

Բառակազմական տեսակետից առանձնանում են բնիկ հայերեն բառերը (մասամբ նաև իրանական փոխառությունները), որոնցով ստեղծվում են նոր միավորներ:

- Արմ.— Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Եր., 1971—1979:
- Բուզ.— Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1883:
- Եղիշ. Մատ.— Սրբոյն հօրն յերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859:
- Եկեղ. պատմ.— Եւսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1877:
- Եւզր.— Սրբոյն հօրն Եւզրի Պնտացոյ վարք և մատենագրութիւնք, Վենետիկ, 1907:
- Լաբուր.— Լաբուրենայ Թուղթ Արգարու, Վենետ., 1868:
- Խոր.— Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց, Տիպոգր., 1913:
- Կոչ.— Կիրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832:
- ՆՀԲ.— Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836—37:
- Սսկ. Պող.— Յովհաննու Սսկերբրանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թրղ-թոցն Պօղոսի, Վենետիկ, 1862:
- Սսկ. Ես.— Երանելոյն Յովհաննու Սսկերբրանի մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1838:
- Վկայք.— Արրահամու Խոստովանողի Վկայք արեւից, էջմիածին, 1921:
- Փիլ. բանք.— Փիլոնի երբայեցոյ բանք երեք..., Վենետիկ, 1822:

Л. Ш. ОГАНЕСЯН—Наименования одежды в древнеармянском языке.— В статье рассматриваются происхождение, словообразовательные особенности, употребительность наименований одежды в древнеармянском языке. Подробно рассмотрены слова следующих типов: 1) головные уборы, 2) обувь, 3) некоторые другие названия.